

Հայտերի ներկայացման հրավեր

Երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն
Ծրագիրը՝ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում»
ՄՁԸ Փոխառություն No.: 5222-AM

Պայմանագրի անվանումը՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման աշխատանքներ**
Համարը՝ **CR4/NCB/B-W/007-19**

23 Դեկտեմբեր, 2019

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային Բանկից՝ «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» ծրագրի ծախսերը հոգալու նպատակով, և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել No. CR4/NCB/B-W/007-19 պայմանագրի շրջանակներում **ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման աշխատանքների** վճարումները կատարելու համար:

2. **ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն** այժմ հրավիրում է իրավասու հայտատուներին մրցութային հայտեր ներկայացնել **ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ կառուցման աշխատանքների համար:**

Աշխատանքների շրջանակն է. Նախատեսվում է կառուցել ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (Մարտունու ԲԿ) նոր տիպային բժշկական կենտրոն՝ մեկ հարկանի, նկուղով, բաղկացած վեց տիպային մասնաշենքերից, ուղղաթիռի հարթակով, բժշկական հաստատության համար նախատեսված կաթսայատնով: Նախատեսվում է նաև Մարտունու ԲԿ-ի առկա էլեկտրական ենթակայանի վերակառուցման և վերազինման, ինչպես նաև արտաքին ինժեներական ցանցերի և կառույցների համակարգերի ներդրման, ներքին իժեներական ենթակառուցվածքների մոնտաժման և տարածքի բարեկարգման աշխատանքներ:

Որակավորման չափանիշներն են (որոնք չեն սահմանափակվում*)

✓ Վերջին հինգ տարիների ընթացքում (2014-2018) միջին տարեկան շրջանառությունը շինարարության գծով պետք է կազմի առնվազն 1,214,500,000 ՀՀ դրամ (մեկ միլիարդ երկու հարյուր տասնչորս միլիոն հինգ հարյուր հազար):

✓ Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա ֆինանսական միջոցների մատչելիություն կամ առկայություն, ինչպիսիք են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր և այլ ֆինանսական միջոցներ (անկախ պայմանագրային կանխավճարներից), որոնք բավարար են շինարարության ժամանակ կանխիկ դրամի հոսքը բավարարելու համար, և պետք է կազմեն 304,000,000 ՀՀ դրամ (երեք հարյուր չորս միլիոն):

✓ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետը ընկած ժամանակահատվածում որպես գլխավոր կապալառու, ՀԳ-ի անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու ունենա նվազագույն թվով ստորև սահմանված նմանատիպ պայմանագրեր **հասարակական և բնակելի շինությունների կառուցման և/կամ վերակառուցման բնագավառում**, որոնք գոհացուցիչ և էապես ավարտվել են.

- (i) 1 (մեկ) պայմանագրի մասնակցություն առնվազն՝ 1,943,000,000 ՀՀ դրամ (մեկ միլարդ ինը հարյուր քառասուններեք միլիոն) արժեքով, կամ
- (ii) 2 (երկու) պայմանագրի մասնակցություն՝ յուրաքանչյուրն առնվազն 971,500,000 ՀՀ դրամ (ինը հարյուր յոթանասունմեկ միլիոն հինգ հարյուր հազար) արժեքով, կամ
- (iii) 3 (երեք) պայմանագրի մասնակցություն՝ յուրաքանչյուրն առնվազն 648,000,000 ՀՀ դրամ (վեց հարյուր քառասունութ միլիոն) արժեքով:

✓ 2015 թվականի հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետը ընկած ժամանակահատվածում վերոնշյալ կամ այլ ավարտված և/կամ ընթացքի մեջ գտնվող պայմանագրերում որպես գլխավոր կապալառու, ՀԳ-ի անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու ունենա նվազագույն շինարարական փորձ հետևյալ հաջող ավարտված հիմնական աշխատանքներում.

- (i) Օդափոխության մեխանիկական դրդմամբ ներմուծման-արտածման օդի լավորակման և սառնամատակարարման համակարգերի տեղադրում, առնվազն 2000 քմ շինության համար, և
- (ii) Հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերի տեղադրում:

Նշված նվազագույն շինարարական փորձը հիմնական աշխատանքներում կարող է ցուցադրվել մեկ կամ մի քանի պայմանագրերով (ոչ ավելի, քան երեքը), որոնք իրականացվել են վերոնշյալ ժամանակահատվածում:

**Որակավորման պահանջների վերաբերյալ լրացուցիչ մանրամասներ ներկայացված են մրցութային փաստաթղթում (Բաժին III. Գնահատման և Որակավորման չափանիշներ):*

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի (NCB) միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառությունների կողմից» (Հունվար 2011 թ., վերանայված Հուլիս 2014 թ.) «Գնումների ուղեցույցներ»: Մրցույթը բաց է Գնումների ուղեցույցում սահմանված բոլոր իրավասու հայտատուների համար: Ի հավելումն՝ խնդրում ենք, նայել գնումների ուղեցույցի 1.6 և 1.7 կետերը, որտեղ ներկայացված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

4. Շահագրգիռ իրավասու հայտատուները կարող են ամբողջական փաթեթը ներբեռնել www.gnumner.am կամ www.armeps.am կայքերից: Ցանկացած կազմակերպություն կարող է

գրանցվել էլեկտրոնային գնումների համակարգում և ներկայացնել Հայտը [ARMEPS](https://www.armeeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով (www.armeeps.am):

Հայտնում ենք, որ ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն պատասխանատվություն չի կրում հայտատուի կողմից վերոնշյալ կայքերից մրցութային փաթեթի սխալ կամ ոչ ամբողջական ներբեռնման, ինչպես նաև հետագայում հրավերի փոփոխությունների առկայության դեպքում դրանց բացթողնման համար:

5. Հայտերը պետք է ներկայացվեն [ARMEPS](https://www.armeeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ոչ ուշ, քան **2020թ. Փետրվարի 4-ը, ժամը 12:00-ն**: Ընդ որում, հայտը կազմող փաստաթղթերը պետք է լինեն կնքված, ստորագրված և բնօրինակից սկանավորված կամ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված: Ուշացած հայտերը ավտոմատ կերպով չեն ընդունվի էլեկտրոնային համակարգի կողմից:

6. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն Մրցույթի ապահովման հայտարարագրով:

7. Պատվիրատուի հասցեն ներկայացված է ստորև՝

ՀՀ ԱՆ «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ
պարոն Հովակիմ Պողոսյան, Տնօրենի պաշտոնակատար

ՀՀ, ք. Երևան 0051, Կոմիտասի 49/4, 5-րդ հարկ

Հեռ.՝ (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37

Էլ. հասցե՝ procurement@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am

Վեբկայք՝ www.healthpiu.am